

կարգութեանց հետ «հաստատեաց և դր-
պրատունս, կը զրէ յիշեալ պատմիչը, և
զնուաստութիւն իմ կարգեաց ուսուցիչ
մանկանցն»։ որով կ'իմանանք՝ թէ վար-
դապետանոց չէր այն։ Կը բերէ հոն ջու-
ղայեցի Սիմէոն վարդապետն ալ, որ կ'ու-
սուցանէ մանկանց «տրինետ արտաբերոց»,
այսինքն ոչ սրբազան ուսումները, և իւր-
վացի 'Նիկողայոս վարդապետը, որ «ու-
սոյց զերսմշտութիւնն»¹։

Այժմու մեր ազգային կամ թաղային
դպրոցաց նախազաղափարն է՝ զոր կը
տեսնենք այդ վերջին շրջանի ցանցառ
ուսումնարանաց վրայ, որոնք կը բացուին
անհատական ձեռնարկութեամբ և կը պա-
հուին ժողովրդեան կամ մենաստանաց
օժանդակութեամբ։

Միջին դարէն սկսեալ՝ կը փոխուին
նաև ուսումնարանին, ուսուցչաց և դպրո-
ցական գործոց հին կոչումները, ինչպէս
տեսանք հոս, և աւելի ընդարձակօրէն
պիտի տեսնենք յետոյ²։

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Շարումասկելի)

1. Զաք. Գ. ԺԳ. — 2. Աստ. ԳԼ. Ե, ԵԳ. Ա.

Ձինաստանի մէջ ազնուականութեան
ինը աստիճաններ կան. — 'Բռնկ, որ
զրեթէ կը համապատասխանէ «Դուքս»ին.
Հոն՝ «Իշխան»ին. 'Նալ՝ «Սեպուր»ին
(gentilhomme), փոքրագոյն աստիճան-
ները — որոնք են Բիւկլ-շէքոշ-եի, Բի-
քոշ-եի, Եիւկլի-եի և Նկլըն-քի-եի, —
կը համապատասխանեն Ասպետութեան.

Ամենէն բարձր պատուանշաններէն մին
է Դեղիկը յաճկոնը (jaquette), որ մի-
միայն կը գործածուի՝ երբ կայսեր կ'ըն-
կերակցի անձը, Բարձրագոյն ցաղաքային
նշանն է սերամարգի փետուրը, որ կը
ծածկէ գլխանոցը։

ԲԱՆՈՍՍԻՐԱԿԱՆ

ՍՊԱՃԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՅԱ ԳԱԽԱՌԸ

(Աւստրալիոյ — Պարսկան — Եւրոպայի միջև)

— 0 —

(Շարումակութիւն տես Բազմ. էջ 259)

Գ.

Հոգ, պարտաւորում և մշակութիւն. — Վարչական
կազմութիւն. — Պատիժներ. — Հարկեր. — Տնտեսա-
կան վիճակ. — Կրթական վիճակ. — Գրագրականներ.
— Գրչագրեր. — Ընկերութիւններ. — Թատրոն և
երաժշտութիւն։

Հոգ, ՊԱՐՍԱՍՏՈՒՄ եւ ՄԵՍՈՒՍԻՆ. — Զա-
հարմահալ գաւառի հողը բաւական արգասանդ
է և արգասաբեր։ Նրա գոյնը զխաւորապէս կար-
միր է և երբեմն ու մասամբ էլ սև, որ տեղա-
կան բարբառով կոչուում է սիպիլի։ Հերկում են
11՝ թիզ խորութեամբ՝ վեցկիով, որ պահան-
ջում է միայն մի լուծ, այսինքն մի զոյգ հզ.
Շատ գիւղացիներ չունին հզներ. նրանք ընկե-
րանում են ունեւոր համագիւղացիների հետ և
միասին մշակում իրենց հողերը. դրանք կոչուում
են շիբիքովի։ Ընդհանրապէս արտերն երկու
տարի մշակում և մի տարի հանգիստ են տալիս։
Պարարտացնում են ոչխարի, էգ ձիւ և իշու
աղբով։ Պարարտացնելու համար գործ են ածում
հետեւեալ միջոցները. իրենց անասունները 20-30
օր պահում են արտերի վրայ. կենդանիներից գո-
յացած պարարտը զօրութիւն է տալիս հողին.
կամ վարելիս հողի վրայ հաւատարապէս աղբ են
ցրում և ապա հերկում։

Ինչպէս շրջակայ գաւառներում, նոյնպէս էլ
Զահարմահալում գիւղացիներն ունեն «աշխցան»
և «գարնցան»։ Աշխան ցանքոս սկսում են օգոս-
տոս 20-ից և վերջացնում մինչև հոկտեմբեր
30-ը։ Աշխան ցանում են ցորեն, գարի, նուշի
և չավդառ։ Գարնան ցանքոսն սկսում են Մարտի
15-ից և վերջացնում մինչև ամսավերջ։ Գար-
նան ցանում են. գարի, հաճար, խաշխաշ, սի-
սեռ, քիսիկ, ոսպ, հոռալ, կտաւահատ, արեա-
ծաղիկ, եռնջա և այլն։ Մոզորաբար ջրովի հա-
ցահարկներէրց ստանում են մէկին 10-ը, իսկ
դէմի հացահատիկներից՝ 1-ին 5։

Արտերը. — Այստեղի արտերն ընդհանրա-
պէս երկարաձև են և բաժանւում են երկու մա-

սի. 1) անկախուն արտեր, որոնց գելուացիները կոչում են գովիգա և 2) կանոնաւոր արտեր, որոնք կոչւում են մարգ: Արտերը միմեանցից բաժանւում են բարակ կորդ (վարուցան չեղած, կոչով) գետնիներով, որով տեղական բարբառով կոչւում են բունար, կամ առաւ: Ընդհանրապէս արտերը միմեանցից զանազանւում են իրենց տարբեր անուններով: Այսպէս՝ հիւսիսից հարաւ ուղղութեամբ ընկած արտերը կոչւում են չաւփաւաւ: արեւելքից արեւմուտք ուղղութեամբ փութած արտերը՝ վերի արաւ: աղբրի մօտ ընկած արտերը՝ սարով: սրանց մօտի արտերը՝ միջի, իսկ միջի մօտի արտերը՝ թունով: աւաի աջ ու ձախ կողմերում ընկած արտերը՝ դօստրաւ: գեւաւի մօտ փութած արտերը՝ չամ: երկու գետակներին միջև ընկած արտերը՝ ջուխտ գետաւիջի արտեր: գիւղերից քառորդ ժամ հեռւորութեան վրայ գտնուող արտերը՝ եօղնկաւնի: սրանց կողքի արտերը՝ միջի, իսկ միջի մօտ փութած արտերը՝ թունով, և այլն: Երբ արտը մշակում են ցանելու համար՝ կոչւում են հերկ: Եթէ հերկը երկրորդում են՝ անւանում են դօխիչաւ: երբ արտի մի մասն են հերկում՝ ասում են մի գործ կամ մի ձեռք: Եթէ արտը յարմարութիւն չունի ջրելու՝ կոչւում են բաշգի: ջրուղ արտը կոչւում է օվի, իսկ չմշակած գետինը՝ սպաւա:

Չահարմանալում երկրագործական աշխատանքն առաջ է տարւում հին նահապետական գործիքներով՝ վեցիկով, անձագլինով, գերան, դիներով և տաստիալով՝ Գաւառում չկան եւրոպական կատարելագործւած մեքենաներ և այլ տեխնիքական գործիքներ, որով աշխատանքը պահանջում է բաւական թիւով աշխատող ձեռքեր և խլում է շատ ժամանակ:

Վարուցանք. — Վարուցանքը գելուական աշխատանքների մէջ ամենակենսականն է, գելուցու կենքի հիմքը, դրա համար էլ գելուացիներ մի առանձին սրբութեամբ է մօտենում վարուցանքին: Գանքի ժամանակն է, ահա աշխատանքի հերոս գեղջուկը, իր հովիտ և խորխտ կեցածքով, նա կապել է սպիտակ նունբանդին (զոգ, նոցը), մէջը լցրել ցորեն կամ գարի և արտն ի վեր-վար գնալով՝ ցանում է սոկեզած հատիկները և աղօթում: Գելուացու ետևից շարժւում է նահապետական վեցիկին, որին լծել են մի գոյգ ձգներ: Վեցկալարը (մանկալը) խփը (մաձը)

բռնած, պատռում է արտի կուրծքը, խոր և ուղղաձիգ ակօսներ բանալով, որոնց միջոցը կոչւում է օգոռ: Եթէ արտը մեծ է՝ գելուացին բաժանում է գործերի կամ ձեռքերի (մասերի), որպէս զի ձգները չյոգան:

Վիջիկին բաղկացած է զանազան մասերից, որոնք են. համ, մաշ, փասայ, փիշա, վարաք, երկու թրեր ու թաստակներ և յառաւամ: Վերջինիս ծայրին է միացւած խափը: Պա մի լիտր ծանրութիւն ունեցող եռանկիւնաձև մի երկաթ է, որի վերին ծայրը կլորաձև է և բուլթ, իսկ ցածի ծայրը՝ սուր:

Արտերը վարելուց յետոյ շուտով մարգում են քարդրվարով, որպէս զի արտի մակերեսը չարթի, որ քաղի ժամանակ քաղուրը հեշտութեամբ հնձէ: Քարդրվարը մի արշին լայնութիւն և կէս արշին բարձրութիւն ունեցող տափակ երկաթ է, որն ունի $2\frac{1}{2}$ արշին փայտէ մի երկար կոթ: Քարդրվարով քաշում են նաև առուններ, թմբեր և ջրտարներ:

Արտերը ջրում են բաւելով, վեց կամ տասն երկու օրը մի անգամ: Բահն ունի փայտէ երկար մի կոթ, որի ցածի մասում ամրացւած է եռանկիւնաձև և մի չարք ծանրութիւն ունեցող երկաթը: Ջրելուց երեք օր անց ձգներով վազ են քաշում, որպէս զի արտը հարթ լինի և հողն էլ փափուկ: Վազը $1\frac{1}{2}$ արշին երկարութիւն և քառորդ արշին լայնութիւն և չորս լիտր ծանրութիւն ունեցող տափակ մի երկաթ է, որի մի երեսի վրայ կան 27 երկաթէ կամ փայտէ ակռաներ, իսկ միւս երեսը հարթ է, որի վրայ կանգնում է գելուացին և քշում:

Յորեն. — Երբ ցորենհատիկը պատռում է գետնի կուրծքը և դուրս է գալիս՝ կոչւում է ծիչ: Երբ մի քիչ կանաչում է՝ օխա: Եթէ մի թզաչափ բարձրանում է՝ կանաւ: Երբ գլուխ արձակելու մօտ է՝ դաւ: Նոր գլուխ է քաշում՝ կար կամ խիւն է ընկել: Երբ դեղնում է՝ հեղի է ընկել կամ հեղի էլի, իսկ երբ չորանում է՝ քաղիչու է էլի: Եթէ ցորենից մէկը գլուխ է քաշում, իսկ միւսը ոչ՝ ասում են ալարա-փիադա:

Հասած ցորենի բոյսի մասերն են. ռիչա կամ յունա (արմատ), ծեղ (ցողուն) և քիւդիս (գլուխ):

Փաղ. — Ցորենը քաղելու համար հարկաւոր են 3-4 հոգի քաղորներ, մի հոգի բանա կապող և մի հոգի էլ քաֆաքիւաշ կամ բոյս, վերջինս 10-12 տարեկան մի տղա է. նա բաֆաները (խուրճեր) իւով կրում է կալը:

Դաղադր. — Այն անձը, որ մանգաղով (չին.

1. Տե՛ս «Չահարմանայի փողովորդական բանահիւտութեան» Վիճենա, 1923, Կր. Երեմեան:

ւած է կեն ու սուր երկարթից և ունի փայտէ մի կարճ կոթ, քաղում է ցորենը՝ կոչուում է քաղտուր, իսկ հրա գործողութիւնը՝ մանչլիլլը: Քաղտուրի ձեռքի բռնած փունջը կոչուում է դոխլիլլ, իսկ հաւաքւած դոխլիլլի բաժնայ կամ խոխո (խորձ), որ ընդհանրապէս բաղկացած է լինում 5-10 դոխլիլլից: Հղլէն հաւաքւած բաժանները դարձուում է քանայի մէջ և իւրով կամ ջորիով տանում կալը: Բանան ունի երեք հատ փայտեր, որոնք կոչուում են կողերի փէտեր և միջի փէտ: Վերջինի վրայ կապւած է մի լւան, որով զանազան ձեւերով կապում են, ինչպէս օր. լօռի բանդ, սեքանդ, և այլն: Փայտերի մէջ ուռկանաձեւ հիւսւած է մագով, որի մէջ դնում են ցորենի, գայուր, հաճարի խորձերը և տանում կալը, ուր, գետնի վրայ, պտկեցնում են բաժանները: Ընդհանրապէս կալի դիրքը քառանկիւնաձեւ է և ունի ցած պատեր: Այստեղ բաժաններն արձալկելով՝ հաշւան են անում (ցրում) գործողով (սա ունի $1\frac{1}{2}$ արշին երկարութեամբ փայտէ մի կոթ և երկու մասներ), ապա լւան են գցում վրան և կալտում: Չափն ունի մի արշին երկարութեամբ փայտէ երեք կողմ միջանկեր, որոնցից առջինի միջայի վրայ կան 6 փառաներ (կլոր և տափարակ սուր երկարներ, որոնք ածելու նման մանրացնում են ցորենը), մէջտեղում 5, իսկ վերջինում՝ 6, ընդամենը 17: Միջինը հետ միացրած են արտալաները, որոնք շինւած են փայտից և ունին $1\frac{1}{2}$ արշին երկարութիւն: Արտալաների վրայ շինւած են քառորդ արշին բարձրութեամբ չորս ստներ, որոնց վրայ դրւած է փայտէ սալքախաւան, որի վրայ նստում է չամ քաղը: Բացի յիշեալ չամից՝ կայ նաև փետե լւան, որ ունի երկու միջա, որոնցից իւրաքանչիւրի վրայ կան 42 ատամներ, ընդամենը 84: Միջանները ամրացրւած են երկու արտալաների միջև: Չափն ունի նաև մի սարթախտ: Փէտէ չամով քաժանում են ցորենի գոգաւանդը (զըլ-խանքները):

Չափի հետ սերտ կերպով կապւած են.

Լուծ. — Դա երկու արշին երկարութիւն ունեցող կլոր և հաստ մի փայտ է, որի իւրաքանչիւր ծայրերին կան երկ-երկու ծակեր, ընդամենը չորս. դրանց միջով անցկացնում են սալմիջները, սրանց էլ հանքի վզները և տակից կապում թելերով, որոնք կոչուում են սամաթիլ:

Չամըաւ. — Դա երկար մի շղթայ է, որի վերևի ծայրը փոխով կապւում են լծին, իսկ ցածի ծայրը՝ չամի երկարթէ օղակին:

Չամբարտ կամ քիւրան կապ. — Սա շինւած է ծառի ճիւղից, որով, չամը քշելու ժամանակ, կապում են եզներին բերանները, որպէս զի յարդը չուտնէ:

Փախաւ. — Երբ չամով կտրւած բաժէն (ցրանխառն յարդը) հաւաքում և կոչտ են կազմում, կոչում են փախաւ:

Խլում անել կամ հրել. — Փախան հուրսէլով աղեղնաձեւ քամուն տալու և ցորենը յարդից շղկելու գործողութիւնն է:

Հուրակի. — Սա ունի երկար մի կոթ և 16 կամ 18 մասներ, որոնք շինւած են իւղունի դիմացկուն և ճկուն փայտից:

Խլան. — Ունի փայտէ երկու մասներ և մի երկար կոթ, սրանով ցրում են խորձերը:

Խլեք մատանի. — Սրանով շրջում են առաջին կալը. շինւած է փայտից և ունի երեք մասներ ու մի կոթ:

Չորս մատանի. — Սրանով կտրւած խորձը հաւաքում են ու շրջում. ունի չորս մասներ և մի երկար կոթ:

Սիլը. — Չաւած ցորենակոչող կոչուում է սելը կամ փօփա, որը խախալով (սա փոքրիկ ծակերով մաղ է, որով ցորենի հողը և խոտի սերմերն են զտում) ածում են շաղթարի (մեծ ծակերով մի մաղ է) մէջ և մաղում: Մաղելիս քամուն տարածը կոչուում է ոտք կամ վարթաղ, ոտքից առաջ եկածները՝ ժուկ, խոտի դան և այլն, իսկ յարդի մանր ծղոնները կոչուում են դարման. սրա խոշոր մասերը՝ կաձոն, մանր մասերը՝ մղւնդ:

Քաւքու. — Սա եռանկիւնաձեւ, փայտից շինւած, երկար կոթով մի գործիք է, որով հաւաքում են կալը:

Սել. — Երբ կալը հաւաքում են, աւելով աւլում են, որպէս զի ծնացած ցորենի հատիկները հաւաքեն:

Քրլիկու. — Սրա ցածի մասը կլոր է և ունի մի երկար կոթ:

Քլունգով. — Ջարդում են հողի կոշտ մասերը, իսկ զագմալով փորում գետիներ:

ՎԱՐՏԱԿԱՆ ԿԱՅՄՈՒԹԻՒՆ. — Չահարմահալում իւրաքանչիւր գիւղ ունի իր կալածատէր — խանը (չառ գիւղեր ունեն 2-4 խաներ), որ բնակւում է կամ գիւղի մօտ, իր սեփական դաւլում, կամ գիւղից հեռու: Իւրաքանչիւր խան

1. Չահարմահալում սալի գործածութիւնն անձանօթ է զեղադնելին: Ա. Ե.

բացարձակ տէրն է իր գիւղին և իր քմահաճոյքի համաձայն կառավարում է ժողովրդին: Նրա հրամանն օրէնք է: Երբ նա որ և է տեղ է գնում, նրան հետևում են մի քանի զինւած ձիաւոր ծառաներ, որոնցից մէկը գնում է առջևից, իսկ միւսները՝ ետևից:

Խաները յաջորդում են միմեանց ժառանգաբար՝ որդոց որդի: Ընդհանրապէս նրանք շատ փարթամ կեանք են վարում: Նրանց տան ամառնեղէններից շատերը շինւած են արծաթից. հագնւում են եւրոպական ճաշակով: Գլուխներին դնում են թանկագին նամաղէ սպիտակ գլխարկ:

գաւաճման մասին, այլ իրենց քմահաճոյքի համաձայն կեղեքում են, յատկապէս հարկերը հաւաքելիս, անխնայ կերպով հարստահարում և օրըսօրէ դառնացնում են գիւղացիներին կեանքը:

Ջաբիթից յետոյ գալիս է գիւղի քահալուդան (քեալանթար կամ քիխայ), որ ընտրւում է կաւածատիրոջ կողմից: Ընտրութիւնն կատարւում է այսպէս. գիւղի մեծամեծները (հարուստները) իրենց հետ թանկագին ընծաներ վերցնելով՝ ներկայանում են խանին: Վերջինս հարուստներից մէկին ընտրում է քահալուդա, որ միանալով զաբէթի հետ, կազմում են գիւղական վարչական



Սարդար Ասադ (Ջաֆար-Ղուլի խամ) — չաջիաբաղի գիւղատէրը

ունին իրենց գրագիրը, մօլլան, այլ և բազմաթիւ սպասուորողներ և ծառայողներ, որոնք կեւրակում են գիւղացիներին արիւն-քրտինքով:

Խաների պարտականութիւններն են. 1) Ամեն անգամ, երբ պարսից տէրութեան վտանգ է սպառնում, արտաքին կամ ներքին թշնամիների կողմից, իրենց ձեռքի տակ եղած ձիաւոր խմբով օգնութեան հասնել և երկիրը պաշտպանել. 2) Տարեկան մի որոշ տուրք վճարել պարսից կաւածատիրոջն:

Իւրաքանչիւր կաւածատէր խան իր բաժնի վրայ նշանակում է մի զաբէթ (գործակալ) և նրան է յանձնում գիւղը կառավարելու, ցորենի հարկերը հաւաքելու և գիւղական ներքին խնդիրները վարելու գործը: Ընդհանրապէս Չահարմաւալի զաբէթները հարստահարիչ և կեղեքիչ մարդիկ են, նրանք երբեք չեն մտածում լայեաթի տնտեսական դրութեան բարւոքման և գիւղերի բար-

մարտիւնը: Քահալուդայի պաշտօնն է դատաւոր լինել, գիւղացիների մէջ ծագած վէճերին ու երկպառակութիւններին վերջ տալ, գլխահարկը հաւաքել և տալ զաբէթին: Սակայն ցուօք պիտի ասել, որ Չահարմաւալի քահալուդաներից չատերը չեն կանգնած իրենց կոշման բարձրութեան վրայ. նրանցից շատ քչերն են, որ հասկանում են իրենց պաշտօնի գիտակցութիւնը և սրտցանք իրենց ժողովրդին: Այդպիսիներից աչքի են ընկնում Մամուռան գիւղի քիխայ Պ. Ղուկաս կարապետեանը, Մուշիգանի քահալուդա Պ. Յովհաննէս Սիմէօսեանը և Սիրաքի քեալանթար Պ. Սամէլ Ղարախանեանը, որոնք մի մի զօրեղ պատեն էն կեղեքիչների հարստահարութիւնների դէմ: Միացեալները սակայն անբարեխիղճ, կեղծաւոր և ազան մարդիկ են, որոնք ամենեւին չեն մտածում գիւղացիների համար և աշխատում են իրենց գրպաններն ուռցնել:

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շաբ. տես Բազմ. 1923 էջ 229)

Ը.

ԲԺՇԿԱՐԱՆ ԱՆԳԷՏԻ ԱՆՊԼՏ

Ամենախոշոր հատոր մը այս Զեռագիրը, որ 358 դ թուահամարը կը կրէ, հընունթեան կարգով ալ ոչ նուազ յարգի, զի ունի՝ 1668 թուականը:

Հաստ կաշեպատ փայտեայ կողքերով լաւ վիճակի մէջ պահուած է այն. կը բաղկանայ 474 թերթէ և կը պարունակէ 948 էջ գրութիւն:

Թուղթը բամբակեայ է. գիրը մաքուր՝ ընթերցելի և նոսր ու միասին: Մեծութիւնն է՝ 24 հար. մեղր, լայնութիւնը 18,5 հար. մեղր, թանձրութիւնը 8 հր. մեղր, իսկ ծանրութիւնը՝ 2250 կրամ:

Ունի Յիշատակարաններ, որոնք կը յայտնեն անոր հնութեան և գրչութեան ժամանակը:

Ընդօրինակութիւն մ'է խառն. մեծ մասամբ Մխիթար Հերացիի, մանաւանդ Ամիրտուվաթի գործերէն քաղուած, որու շնորհիւ 1774 — 1807 զարու մէջ ԳՐԻԳՈՐ և ՄԻԼԱՍ անուն անձեր և ուրիշներ բժշկական արուեստը ի գործ դրած են, ինչպէս պիտի տեսնենք ցիւ վարը:

Առաջին գործը զոր կը կարդանք՝ կը կրէ. «Պատմութիւն և նախադրոտքիւն վասն շորից ժամանակաց, որով յատաբար տեսնի թիւն զկենացն և զմահութեն և հիստորիկն» վերնագիրը՝ շորս թերթի մէջ ամփոփուած, որ արդէն Ամիրտուվաթի օգուտ թշնառեալ սկիզբը կը կարդացուի:

Յետոյ կը սկսի Մարդակազմութիւն մը, յար և նման Ամիրտուվաթի գրած համառուն աշխատութեան:

59 գլուխներէ բաղկացած է այս Մարդակազմութիւնը, և նախ ունի իր ցանկը՝ որ է.

Այդպիսիներէց յայտնի են Վերին — Քոնարքի քիտայ Պ. Մանուկ Մկրտչեանը և Յածի — Քոնարքի քեաղիուդա Պ. Գասպար Մինասեանը: Դեռ աւելին: Նրանք միացած զարէթների հետ գիւղացիներին ճշուում են, տուգանքի ենթարկուած և խեղճացուած: Սրա վրայ աւելացնենք և այն, որ նրանցից շատերը պարսպում են վաշխառութեամբ. գիւղացիին քեաղիուդայից պարտք է վերցնում թումանին 4—5 շայի տոկոսով: Կալից յետոյ նա տալիս է տոկոսը ցորենով, որովհետեւ փող չունի: Յորենը, սակայն, զնահատուած է աւելի ցած արժէքով, և գիւղացին ստիպւած ծախում է և վճարում միայն տոկոսը, իսկ պարտքը մնում է պարտք:

Եթէ գիւղացին դժգոհ է լինում թէ՛ խանից, թէ՛ զարէթից և թէ՛ քեալանթարից, այն ժամաշուկ նա բողոք է ներկայացնում Զլախօս. դատարանում և հայաբնակ Մամուքա գիւղի հարաւային կողմը, ուր վճուում են գիւղական բոլոր բարդ դատերը: Այդտեղ հաւաքուած են Զահարմահալի բոլոր խաները, որոնցից մէկն ընտրուած է նահանգապետ: Նրանք մնում են Զլախօսում ուղիղ երեքուկէս ամիս, Մայիս 15 — ից մինչև Օգոստոսի վերջերը: Այդ ժամանակամիջոցում Զլախօսը ներկայացնում է հետաքրքրական մի պատկեր: Այնտեղ գուր տեսնում էք 300 վրաններ. դրանցից 50 ճերմակ վրանները խաների բնակութեան համար պատրաստուած են, իսկ մէկը, որ շատ մեծ է և աչքի է ընկնում իր փառայից դիրքով, կոչուած է դիւանխանէ: Այդ վրանի ներքոյ են նստում խաները և վճուում դատերը, օրական երկու անգամ, առաւօտեան և երեկոյեան, ամէն անգամ երկու ժամ, ընդամէնը՝ չորս: Մնացեալ 249 վրանները սե են և պատկանում են խաների ծառաներին և բողոքաւորներին: Ինչ դեր է կատարում, սակայն, իրականութեան մէջ դիւանխանէն: Փաստօրէն ոչինչ: Գիւղացիներն իրենց երկրիդից չեն գանձատուում և բաւարարուում են միայն աղալանքներ ներկայացնելով: Իսկ ի՞նչպէս են հօգացուած դիւանխանէում եղած ծախսերը, ո՞ւմ հաշուով են կերակրուած խաները և նրանց բազմաթիւ սպասաւորներն ու ծառաները: Այդ բոլորը ծանրանում են խեղճ գիւղացիների ուտերի վրայ...

Վիւննա

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

